Հաստատված է
ԵՊՀ ռեկտորի «10» 07 2013 թ-ի
122§30 հրամանով

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Երևանի պետական համալսարանի ռեկտորին կից տեխնիկական խորհրդի

1. ԵՊՀ ռեկտորին կից տեխնիկական խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) խորհրդակցական մարմին է, որը ձևավորվում է ԵՊՀ ռեկտորի հրամանով:

2. Խորհրդի նպատակն է աջակցել ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրից բխող տեխնիկական, տեղեկատվական, տեխնոլոգիական և ճարտարագիտական խնդիրների լուծմանը, քննարկել համալսարանի համար կարևոր նշանակություն ունեցող ծրագրերն ու նախաձեռնությունները, ներկայացնել համապատասխան առաջարկություններ:

3. Խորհրդի նախագահը ԵՊՀ ռեկտորն է: Խորհրդի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության ԵՊՀ ռեկտորի կողմից:

4. Խորհրդի կազմը հաստատվում է ԵՊՀ ռեկտորի կողմից՝ 2 տարի ժամկետով: Խորհրդի կազմի մեջ են մտնում ռեկտորը, պրոռեկտորները, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի դեկանը, Տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման վարչության պետը, գլխավոր հաշվապահը, Տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոնի տնօրենը, ինչպես նաև համալսարանի այլ ստորաբաժանումների ղեկավարներն ու աշխատակիցները:

5. Ռեկտորի հրավերով Խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով, մշտական կամ ժամանակավոր հիմունքներով կարող են մասնակցել համապատասխան կարգավիճակ կամ որակավորում ունեցող մասնագետներ:

6. Խորհրդում որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ: